ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ/ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ԿՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Սերբիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ցանկանալով ամրապնդել երկկողմ հարաբերությունները և

ցանկանալով դյուրացնել իրենց այն քաղաքացիների տեղաշարժը, ովքեր կրում են դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական անձնագրեր,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերի պետությունների դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական վավեր անձնագրեր կրող քաղաքացիներն ազատվում են մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելու, այն տարանցելու և այնտեղ մնալու համար մուտքի արտոնագրի պահանջից ինչսուն (90) օրը չգերազանցող ժամանակահատվածում:

Հոդված 2

1. Դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական վավեր անձնագիր կրող՝ մի Կողմի պետության՝ մյուս Կողմի պետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների անձնակազմի անդամ հանդիսացող քաղաքացիները, ինչպես նաև նրանց՝ դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական վավեր անձնագիր կրող ընտանիքի անդամները կարող են մուտք գործել և մնալ առանց մուտքի արտոնագրի, եթե նրանց առաջին մուտքի մասին տեղեկացվել է դիվանագիտական ուղիներով դրանից առնվազն երեսուն (30) օր առաջ:
2. Դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական վավեր անձնագիր կրող՝ մի Կողմի պետության քաղաքացիները, ովքեր ներկայացնում են իրենց պետությունը մյուս Կողմի պետության տարածքում գտնվող միջազգային կազմակերպությունում, ինչպես նաև նրանց՝ դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական վավեր անձնագիր կրող ընտանիքի անդամներն ունեն 1-ին կետում սահմանված նույն իրավունքները:

Հոդված 3

Կողմերի պետությունների դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական վավեր անձնագրեր կրող քաղաքացիները պետք է հատեն սահմանը միայն միջազգային երթևեկության համար նախատեսված սահմանային անցակետերով:

Հոդված 4

Մի Կողմի պետության դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական վավեր անձնագրեր կրող քաղաքացիները պետք է հարգեն մյուս Կողմի պետության գործող օրենքներն ու կանոնները այդ պետության տարածքում գտնվելու ընթացքում:

Հոդված 5

1. Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Կողմերի իրավասու մարմինների իրավունքը՝ մերժել մյուս Կողմի պետության դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական անձնագիր կրող քաղաքացու մուտքի կամ կացության թույլտվությունը՝ առանց մեկնաբանելու իրենց որոշումը, եթե վերջինս հանդիսանում է persona non grata (ոչ ցանկալի անձ):
2. Եթե մի Կողմի պետության քաղաքացին կորցնում է իր անձնագիրը մյուս Կողմի պետության տարածքում, նա պետք է այդ մասին հայտնի ընդունող պետության իրավասու մարմիններին: Համապատասխան դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը պետք է իր քաղաքացուն տրամադրի նոր անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ և այդ մասին հայտնի ընդունող պետության իրավասու մարմիններին:

Հոդված 6

1. Կողմերը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ առնվազն երեսուն /30/ օրվա ընթացքում, կփոխանակեն ներկայումս կիրառվող դիվանագիտական և ծառայողական/պաշտոնական անձնագրերի նմուշները և դրանց կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը:
2. Եթե ընդունվում է անձնագրի նոր տարբերակ, կամ փոփոխությունների է ենթարկվում գործողը, Կողմերից յուրաքանչյուրը պետք է անհապաղ տեղեկացնի մյուս Կողմին՝ նոր կամ փոփոխված անձնագրի նմուշը դիվանագիտական ուղիներով փոխանցելով դրա պաշտոնական գործածումից առնվազն երեսուն /30/ օր առաջ:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման ընթացքում ծագած վեճերը լուծվում են դիվանագիտական ուղիներով:

Հոդված 8

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ժամանակավորապես կասեցնել սույն Համաձայնագրի կիրառումն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ազգային անվտանգության, հասարակական կարգի կամ հանրային առողջության նկատառումներից ելնելով: Նման կասեցումն ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին տեղեկացնելուց անմիջապես հետո: Կողմերը պետք է վարվեն նմանապես, երբ կասեցումը վերացվում է:

Հոդված 9

Կողմերից յուրաքանչյուրը կարող է սույն Համաձայնագիրը փոփոխելու գրավոր առաջարկ ներկայացնել: Կողմերի համաձայնեցրած ցանկացած փոփոխություն ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածում նախատեսված կարգով:

Հոդված 10

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով դրա ուժի մեջ մտնելու համար Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ավարտի վերաբերյալ վերջին ծանուցումը ստանալուց երեսուն (30) օր հետո:
2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին այդ մասին դիվանագիտական ուղիներով ծանուցելով, և սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է նման ծանուցում ստանալուց հինսուն (90) օր հետո:

Կատարված է ք. Բելգրադում 2011 թվականի ապրիլի 4-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, սերբերեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում առաջացած տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տարբերակը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011թ. օգոստոսի 22-ին